# ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԼՄ – 18/27

**ք. Վանաձոր** **20 Նոյեմբերի 2018թ.**

ՀՀ Լոռու մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Խաչատրյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Գլխավոր կարգադրիչ, մի կողմից, և Վանաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքապետ Մ.Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Ստացող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Գլխավոր կարգադրիչը հատկացնում է, իսկ Ստացողը ստանում է ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված (Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին) միջոցները (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով), ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի « ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Շիրակի մարզպետարաններին գումար հատկացնելու մասին» թիվ 1211-Ն որոշման հավելված 7-ով սահմանված Վանաձոր համայնքի փողոցների կապիտալ նորոգման (Շիրակացի, Վերածնունդ, Փարաջանով, Սասունցիներ, Մաշտոց, Լազյան, Մոսկովյան, Չերկասի, Մալաթիայի և Շինարարներ-Իսահակյան-Ներսիսյան փողոցները միացնող հատված) նպատակով հատկացվող նպատակային հատկացումը (այսուհետև սուբվենցիա)՝ 39.744.000 (երեսունինը միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով՝ հետևյալ համամասնություններին համապատասխան:

| Հ/Հ | Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին | Հատկացվող գումարն ըստ եռամսյակների( Աճողական) հազ. ՀՀ դրամ, որից՝ |
|---|---|---|
| | | տարի |
| 1. | Վանաձոր համայնքի փողոցների կապիտալ նորոգում (Շիրակացի, Վերածնունդ, Փարաջանով, Սասունցիներ, Մաշտոց, Լազյան, Մոսկովյան, Չերկասի, Մալաթիայի և Շինարարներ-Իսահակյան-Ներսիսյան փողոցները միացնող հատված) | 39,744.0 |
| | Ընդամենը | 39,744.0 |

1.2 Սույն պայամանագրի 1.1 կետում նշված ֆինանսական միջոցները Հայաստանի Հանրապետության համայնքներին տրամադրվում են հիմք ընդունելով տվյալ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով համայնքի և ընտրված մասնակցի հետ կնքված գնման պայմանագրի շրջանակում մարզպետարան ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերը: Ընդ որում ձեռքբերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքին վճարումը իրականացվում է ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա, պայմանագրով սահմանված գումարի (99360.0 հազ. դրամ) այն տոկոսային հարաբերակցությամբ, ինչ տոկոսային հարաբերակցությամբ, որ նշված է սուբվենցիայի պայմանագրում (40.0%):

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գլխավոր կարգադրիչը իրավունք ունի՝

2.1.1 Իրականացնել վերահսկողություն սուբվենցիայի գումարի նպատակային օգտագործման նկատմամբ:

2.1.2 Սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում համայնքի միջոցներից հետգանձել ոչ նպատակային օգտագործված գումարը և դադարեցնել սուբվենցիայի հետագա հատկացումը:

2.1.3 Պահանջել Ստացողից՝ ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից (ծրագրի ավարտից) հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնել սուբվենցիայի չօգտագործված գումարը :

2.2 Գլխավոր կարգադրիչը պարտավոր է՝

2.2.1 Ստացողին հատկացնել սուբվենցիայի գումարը՝ փորձագիտական եզրակացություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված և գնումների գործընթացի արդյունքում կնքված պայմանագրի գնին համապատասխան:
2.3 Ստացողն իրավունք ունի՝
2.3.1 Ստանալ Գլխավոր կարգադրիչի կողմից հատկացվող սուբվենցիայի գումարը:
2.4 Ստացողը պարտավոր է՝
2.4.1 Սուբվենցիայի գումարը օգտագործել նպատակային՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով՝ Գլխավոր կարգադրիչին ներկայացնելով տեղեկատվություն գնումների գործնթացի և գումարի ծախսման վերաբերյալ (ներկայացվում են գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի և կատարողական ակտերի պատճեները):
2.4.2 Ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից (ծրագրի ավարտից) հետո եռօրյա ժամկետում սուբվենցիայի չօգտագործված գումարը վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ստացողը պատասխանատվություն է կրում սուբվենցիայի գումարների նպատակային օգտագործման համար:
3.2 Գլխավոր կարգադրիչը պատասխանատվություն է կրում ըստ Ստացողի կողմից ներկայացված կատարողական ակտերի սուբվենցիայի գումարների համամասնական հատկացման համար:

## 4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ( ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

## 5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը:
5.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
5.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կառավարության որոշումների հիման վրա, կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
5.4 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉ | ՍՏԱՑՈՂ |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզպետարան | Վանաձորի համայնքապետարան |
| ք. Վանաձոր, Հայքի հրապարակ | ք. Վանաձոր, |
| ՀՎՀՀ 06930769 | ՀՎՀՀ 06901936 |
| Հ/Հ 900231001687 | Հ/Հ 90023501560 |
| ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ | ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ |
| _____ Վ.Խաչատրյան | _____ Մ.Ասլանյան |
| Կ. Տ. | Կ. Տ. |